




ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը խոր վշտով կը գուժեն մահը իրենց քաղամայ պաշտօնէին եւ միաբանին՝

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐԵՂԱՅ ԳՕՃԱԿԷՕԶԵԱՆԻՆ

1914 - 2004

որ ի Տէր հանգեալ, Ուրբաթ, 2 Ապրիլ 2004, կէսօրէ ետք ժամը 3-ին, Երուսղէմի Ֆրանսական հիւանդանոցին մէջ:

Մարմինը Ս. Յակոբայ Տաճար պիտի փոխադրուի, Կիրակի, 4 Ապրիլ 2004-ին կէսօրէ ետք ժամը 3-ին:

Վերջին Օծման արարողութիւնը ու Թաղումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 5 Ապրիլ 2004-ին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուցուելիք Ս. Պատարագի ընթացքին ժամը 9-ին: Որմէ ետք մարմինը պիտի ամփոփուի Ս. Փրկչայ Գերեզմանատան մէջ:

Յետ արարողութեան պիտի հրամցուի ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի մէջ ՀՈԳԵՍՈՒՐՃ:

«ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՆ»

Դ Ի Ի Ա Ն Ս. Ա. Թ Ո Ռ Ո Յ

3 Ապրիլ 2004

Ս. Ա.ԹՈՐ

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐԵՂԱՅ ԳՕՃԱԿԵՕԶԵԱՆԻ

Բեթղեհեմի Ս. Ծննդեան Տաճարի եւ Բեթղեհեմի Հայոց Վանքի Միաբաններէն Տ. Ներսէս Արղ. Գօնակէօզեան իր մահկանացուն կնքեց Նրուսաղեմի Ֆրանսական հիւանդանոցին մէջ Ուրբաթ, 2 Ապրիլ 2004ին:

Կիրակի, 4 Ապրիլ 2004 կէսօրէ ետք, ժամը 3ին նորոգ հանգուցեալ Տ. Ներսէս Արղ. Գօնակէօզեանի մարմինը քերուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար եւ կատարուեցաւ Տան Կարգ:

Բշ, 5 Ապրիլ 2004, Աւագ Երկուշաբթի առաւօտ, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատոյց Տ. Ղեւոնդ Արղ. Յովհաննիսեան: «Ողջոյն»էն առաջ հանգուցեալի դագաղը վարդապետներ խորան բարձրացուցին: Լուսարարապետ Սրբազանը կատարեց Վերջին Օծումը, իսկ Պատրիարք Սրբազանը խօսեցաւ դամբանականը: Միաբանութիւնը եւ ժողովուրդը հանգուցեալ եկեղեցականին աջը համբուրելով իրենց վերջին յարգանքը մատուցին:

Ժամը 10ին Հանգստեան Կարգ կատարուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Մայր Տաճարին մէջ: Այս, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, թաղմանական թափօրը մինչեւ Ս. Փրկիչ միաբանից գերեզմանատուն, չորս անգամ կանգ առնելով, հոգեւոր երգերով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցումով, հանգուցեալին մարմինը առաջնորդուեցաւ դէպի իր յաւիտեանական կայքը:

Թաղման Կարգէն ետք, Միաբանութիւնը թափօրով վերադարձաւ դէպի Ժառանգաւորաց Վարժարանի սրահը, ուր մատուցուեցաւ հոգեւոր:

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. Ներսէս Արղ. Գօնակէօզեան, աւագանի անունով Յակոբ, ծնած է Պոլիս 1914ին: Նախնական կրթութիւնը ստացած է՝ աշակերտելով տեղւոյն գիւղերէն մէկուն քահանային քով: 1934ին կատարած է իր գինուորական ծառայութիւնը Պոլսոյ քանակին մէջ, եւ այնուհետեւ հետեւած կեանքի ազատ ասպարէզին: 13 Մարտ 1956ին, առաջ անգամ Նրուսաղեմ եկած է կարն ծառայութեան մը համար: Տարի մը անց արդէն ընդունուած է աշխատաւոր միաբան եւ կատարած է Ս. Յակոբայ օգնական Լուսարարի եւ Լուսարարի պաշտօնները:

1961ին մեկնած է Պէյրութ եւ հոն ամուսնացած Վերոնիգա Քրուզեանի հետ: 1972ին, երբ Տ. Մեսրոպ Վրդ. Տեփոյեան Պէյրութ կը գտնուէր, զինք կը հրաւիրէ Նրուսաղեմ: Վերադառնալով կը նշանակուի որպէս լուսարար Ս. Ծննդեան Տաճարի:

1973ին ձեռնադրուած է ամուսնացեալ քահանայ, Ս. Էջմիածնայ եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Շահէ Եպս. Անէմեանի: Երեցկնոջ մահէն ետք, 20 Յունուար 1985ին, Բեթղեհեմի Ս. Ծննդեան Տաճարին մէջ, ընդունած է «Արեղայութեան» վեղարը:

Ներսէս Արղ. Գօնակէօզեան 90 տարեկան հասակին, մինչեւ իր կեանքին վախճանը հաւատարմօրէն ծառայեց Սրբատեղեաց մէջ իրրեւ Միաբան, Պատարագիչ եւ Ժամասաց: